ԱՆՏԻՊ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆԻ ԱՐԽԻՎԻՑ

Ներկայացվող վավերագրերը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սակաղմիկոս Ստ. Մալխասյանի որդու՝ Լեոնի նամակներն են՝ գրված Պետրոգրադից, Տաշքենտից, Ալեքսանդրապոլից, Ղարսից՝ հասցեագրված ծնողներին։

Բնագրերը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատան, Ստ. Մալխասյանի ֆոնդում։

Գ. Բ. ՂԱԶԱՐՅԱՆ

№ 1

16/9—14

Սիրելի Հայրիկ

Այսօր առաւօտեան միանգամայն անսպասելի բերին ինձ 60 բուրլի, որ ղու ուղարկել ես հեռագրով...։ Նախորդ նամակիցս արդէն իմացած կլինես, որ փողը ստացայ ամսի 7-ին։ Այնպէս որ ամսի 6-ին (կարծեմ այդ օրն եմ գրել նամակ) ես իրաւունք ունէի կարծելու, թէ փողը կորել է, քանի որ 20-րդ սկսէն 7-ը անցել էր 18 օր։ Փոստում էլ ինձ ասացին, որ փողը կորել է, և խորհուրդ տուին անել այնպես, ինչպէս ես արի։ Համենայն դէպս փողը կորած չէ և չի էլ կարող կորչել։ Նոր 60 բուրլին ես կպահեմ միւս ամսուայ համար...։

Հետաքրքիր են այն տեղեկութիւնները, որ տալիս են վիրաւորուած հայ զինուորները (պատերազմի մասին)։ Նրանք բոլորն էլ միաբերան ասում են, որ մեզ 10 անգամ աւելի են ջարդում, քան մենք գերմանացոց։ Գերմանացիք աչքի չեն ընկնում քաջութեամբ և նոյնիսկ վախկոտներ են, բայց սարսափելի է նրանց արտիլերիան, որի մասին ահ թերթերը գրում են, թէ աւելի վատն է, քան մերը։

Բանից դուրս է գալիս, որ գերմանացիների բոլոր թնդանօթները և գնդացիրները դրուած են աւտոմոբիլների վերայ։ Սարսափելի պատկերներ են նկարագրում զինուորները պատերազմից։ 42 մմ կտրանոց թնդանօթների գնդակները 3 սաժէն հող են փորում (այնքան տարածութիւն, որտեղ կարելի է տեղաւորել մի վզուտ (32 մարդ) զինուոր։ Առաւօտը թնդանօթաձգութիւնը սկսում են գերմանացիք, քիչ յետոյ սկսում են մերոնք։ Ժամը 12-ին երկուսն էլ լռում են, երկու ժամ յետոյ գերմանացիք դարձեալ սկսում են, բայց մեր արտիլերիան այլևս անկարող է պատասխանել։ Սա ժամը 6-ին սկսում է նորից մերը— և դադարում են բոլորը գիշերով։ Նրանց չեմոդանները դուրս են գալիս գետինը և 3 սաժէնը վրայ եղած չեղածը բարձրացնում օդը։ Մի 10 վայրկեանից յետոյ օդից իջնում են մարդկանց կտորներ. թև, ոտք, իրան, գլուխ, կէս մարմին և այլն. կռուի ժամանակ օֆիցեր գոյութիւն չունի։ Եւ ոչ մի կարգադրութիւն չի լինում գլխաւոր շտաբից. բոլոր զինուորները կլսում են իրենց գլխու։ Նրանց ասելով 100 գերմանացին իրենց թնդանօթներով (որոնց չեմոդանները դուրս են թռչում բոպէն երկու հատ ահագին երախներից) ու պուլիմեոտներով կարող են դիմադրել 1000—1500 ռուս զինուորի։ Աւտոմոբիլը վազում է գէս ու դէն, և վրան ամրացրած գնդակացիրը շարունակ գործում է, ջնջելով գետնի երեսից ամեն բան։ Ամեն մի գնդակացիրը բոպէն արձակում է 5000 գնդակ։ Հետաքրքիր է, որ գերմանացիք ցամաքի վերայ գործ են ածում շրապնել², որ ինչքան ես գիտեմ միշտ այժմս ծովի վերայ էին գործածում։

Մեր յաղթությունները կապուած են հսկայական զոհերի հետ։ Եթէ մի տեղ յաղթում ենք, րոտայից (որ ունի 250 մարդ) մնում են միմիայն 50։ Մեր պէխոտան (հետևակ զորքը) և կաւալերիան (հեծելազորը) շատ աւելի լաւն է, քան գերմանացոցը, բաց նրանք գիտեն հնարը։ Առաջից կանգնեցնում են արտիլերիան, յետոյ արդէն հետևակ ու հեծեալ զորքը։

Մեր յաջողությունները վերագրում են ատականերին, որ իսկապես հերոսական են և զարզանդեցնում են գերմանացոց։ Ատակայ տալ (գրոհ տալ) չի կարելի ցերեկով, որովհետև խոտի պես կհնձեն, ստիպուած են գիշերը գործել... ահա մեր միակ ոյժը։ Վրացիների և հրէաների մասին ասում են, որ նրանք փախչում են ամեն մի յարմար րոպէին։

Իմ հարցին, թէ առհասարակ հայեր շատ են ջարդում, պատասխանեցին. «դէ, հայի համար փախչել չկայ, իսկ առաջ ես գնում՝ ջարդում են»։ Լսդոհում են օֆիցերներից, թէև վերջիններս շատ լաւ են վերաբերուում նրանց հետ և ջարդում են զինուորների հետ հաւասար, (երբէք չեն փախչում). բայց նույնքան անզօր են գերմանացոց դէմ, ինչքան իրենք՝ զինուորները։ Բացի այդ նրանք չգիտեն ճանապարհները, թշնամու դիրքերը և տանում տանում յանկարծ ձգում են պոլկը երկու կրակի մէջ, ջարդուում թէ՛ իրենք, թէ ջարդել տալիս զորքը։ Բայց նրանք շատ գոհ են. հիւանդանոցները յաճախող մարդոց և հիւանդանոցների ծառայողների (сестрица) վերաբերմունքից։

Երբեմն գեներալների և նման մարդոց կանայք ու աղջիկները լանում են վիրաւոր զինուորի ոտքերը։ Այս բանը ոգևորում ու վարձատրում է վիրաւորներին այնքան, որ նրանք ձգտում են դեռ չլաւացած կռուի դաշտ (բայց միայն Կովկասում, որովհետև այնտեղ աւելի դուրեկան է կռուիլը)։

Այս տեղեկությունները միանգամայն ճիշտ են. ես վիրաւորների համար նամակներ եմ գրում, ղբաղեցնում եմ նրանց (հայերեն) և նրանք պատմում են այս բոլորը։

Մոռացայ դրել այստեղի հասարակական տրամադրության մասին.

Լրագրական տեղեկություններին բոլորը (խօսքս հասկացողների մասին է) վերաբերուում են բացասական (չեն հաւատում), իսկ շտարի տեղեկություններին՝ կասկածով։ Ես ֆորմուլիրովկայ եմ անում։ Լրագրի գրածի 99 % սուտ է, 1 % կասկածելի։ Ուսանողության մէջ սկսուել են անկարգություններ։ Պետական դումայի 6 անդամների ձերբակալման առիթով դասադուլ արին։ Սև հարիւրականները (ուսանողների այդ մասը կոչում է ակադեմիստ) (академисты) սկսեցին պարապել։ Ուսանողները (դէպքը կատարուել է համալսարանում) ուզում են խանգարել դասախօսին։ Ակադեմիստները դէմ են կանգնում։ Սկսում է կռիւ։ Ակադեմիստներին ծեծում են սարսափելի (մինչ արիւն դալը)։ Կէս ժամ յետոյ գալիս է ոստիկանությունը։ Ոստիկանությունը մտնում է աուդիտորիան և ասում. «господа академисты могут уйти»։ Մնացածների ազգերը գրում են (300 հոգի)։ Սրանցից 5-ին ձերբակալել են։ Միւսներին էլ շուտով կձերբակալեն։

Սի խօսքով, պատերազմի հետևանքների մասին խօսելը վաղաժամ է։ Շատ բան դեռ ուզում եմ գրել, բայց տեղ չկայ։ Կպատմեմ Թիֆլիսում։ Ես ողջ առողջ եմ։

Լևոն

№ 2

Մի քանի օր առաջ այստեղի հայ ուսանողությունը մի գրություն էր ստացել կոմս Վարանցով-Դաշկովից[3], որով վերջինս առաջարկում է ամեն կերպ օգնության հասնել Տաճկահայաստանում վտանգուած հայերին[4]։ Նա գրում է. «Շատ հաւանական է հայերի կոտորածը Տաճկահայաստանում, ուստի

դուք իրրև երիտասարդ, և կոթուած դաւակներր հայրենիքի, պէտք է անձամբ դար դործերու սահմանում, փրկելու համար ձեր եղբայրներին»։ Այստեղ կաղմւում են կամաւորների, քարոզիչների և նման անձանց խմբեր, որոնց կառավարութիւնը իր ծախսով փոխադրում է Կովկաս։ Նոյնիսկ սկսել են զինադործութեամբ պարապիլ (զեկաւարում է մի սպայ)։

Այս նամակով ես դիմում եմ և հարցնում խորհուրդ. ինչ պէտք է անեմ ես այժմս, ինչ դիրք բռնեմ ընկերներիս մէջ։ Արդէօք մի միջոցով էլ ես չե՞մ մասնակցելու ընդհանուր դործին։ Նիւթական ոչ մի բան չեն ընդունում։ Առաջին ժողովին, մեր կուրսերի ներկայացուցիչը ասաց. Թող հաւարուեն այստեղ այն մարդիկ, որոնք պատրաստ են իրենց անձով օդնել ազդին։ Սպասում եմ շտապ պատասխանի։

Լեոն Մալխասեան

25/9—14

№ 3

Սիւելի Հայրիկ

Երէկ Երեկոյեան վերջապէս ստացայ քո նամակդ (ընդամէնը երկրորդ նամակն է), որի մեջ դրում ես կամաւոր դրուելու մասին։ Մի շատ տարօրինակ հանդամանք. այս անդամ էլ հասցէն սխալ ես դրել և միայն պատահմամբ ստացայ նամակդ (փոստից ուղարկել էին մեր կուրսերը)։

Կամաւոր դրուելու մտքից ես վաղուց եմ հրաժարուել, որովհետև համոզւում եմ, որ ուսանողներր անմեծ և շտապողական քայլ արին։ Խելքը լէհերինն է. դոնէ թղթի վրայ մի բան ունեն նրանք (թէև թղթին էլ չեմ հաւատում ես), իսկ մենք ինչ ունենք. լէհերը կամաւորներ չեն տալիս, որ կողմը ընկան (դերմանացոց կամ ռուսաց իշխանութեան տակ) նրանց կողմը բռնում են, իսկ մենք մեր ամեալաւ ոյժերը տալիս ենք հաւատալով նրանց, որոնք 6—7 տարի սրանից առաջ զինեցին մեր թշնամիներին (հայ-թուրքական կոտորածը)։ Ինչ փաստ ունենք մենք պնդելու, որ Ռուսաստանը տիրելուց յետոյ հայաբնակ վայրերը, նրանց մէջ աւտօնոմ կառավարութեան ձևը կմացնեն, և ոչ թէ կդարձնի մի նահանգ, ու կը դաղթեցնի մալականներին, ամենաբերրի տեղերը նրանց բաժանելով։

Ուսանողներր կարծես իրենք էլ այս բանը հասկացել են և իրենց տարբ ճառերը (որոնց մէջ նրանք պարծենում էին ռուսահպատակ լինելով. ես սփոսսում եմ, որ ռուսահպատակ եմ) կրճատել են. ուսանողների մեծ մասը մնացել է ու զբաղւում է իր գործերով։

Պէտք է ասեմ, որ բոլոր այն բաները, որ ես լսում եմ վիրաւոր դեղուորներից ու զանազան ծածուկ աղբիւրներրց, դերմանացոց մասին, ինձ շատ հոռետես են դարձել մեր յաջողութիւնների վերաբերմամբ. թէև ռուս յառաջադիմական թերթերն էլ (РЕЧЬ, СОВР...) շարունակ մեր փառաւոր յաղթութիւնների մասին են դրում, բայց ես զգում եմ, որ այդ «փառաւոր» յաղթութիւնների վայրերը օր օրի վերայ մեզ մօտենում են։ Ես այժմս ինչպէս դեռ Դիպակում կրկնում եմ աւելի ևս համոզուած, որ պատերազմի հետևանքների մասին խօսելը շատ վաղ է... և թէ մեր կողմը կլինի վերջնական յաղթանակը... շատ կասկածելի է։ Հէնց այդ տեսակետից մեր հայերը շատ յիմարութիւն արին այդպէս շուտ ոգևորուելով. Պէտք է սպասէին և հանդէս գային վճռական րոպէին, գուցէ եթէ նրանք գլուխ պատռած չվազէին պատերազմի դաշտը... մենք էլ ստանայինք այն թուղթը, որ ստացան աւելի խոհեմ ու ոչ մի գործ չանող լեհերը։

Այդպիսով մեր զոհերը թէ՛ աւելի քիչ կլինէին, և թէ մեր իդձերը իրագործելու շանսերը աւելի շատ։ Շատ ցաւում եմ, որ այս բոլորը լրագիրներում գրել չի կարելի և ոչ էլ արձակ ասել... Թէ չէ կարծեմ համամիտներ շատ կունենայի...

Ես նամակներ գրում եմ շատ, մանաւանդ Թիֆլիս, իսկ նամակներ գրելու ու մանաւանդ ստանալու պահանջը մերոնց հետ հոգևոր կապը պահպանելու համար ղրում եմ ամենամեծ չափով։

Արձեալ ուզում եմ քաղաքականութեան մասին գրել։ Հայերը թէև շատ լաւն են անում (կամաւորների մեծ բանակ են տալիս, բացի մնացած բազմաթիւ օգնութիւններից), բայց այդ արածը չեն աշխատում լայնել։ Հատերինն թէև բրիստոնէական կրօնը պահանջում է, որ մարդ լաւ գործ անի աջ ձեռքով այնպէս, որ ձախ ձեռքը չիմանայ, բայց նոյն բրիստոնէական կրօնը պահանջում է մի ապտակ ստանալուց յետոյ երկրորդը խնդրել, և ոչ թէ, գերմանական շեմօգանդին, ռուսական շեմոդանով պատասխանել։ Ասելս այն է, որ հարկաւոր է ռուսական հասարակութեան լայն խաւերին ծանօթացնել այն բոլորի հետ, ինչ որ անում են հայերը (գեռ մի քիչ էլ չափազանցնել) նախորդ հասարակական ուշադրութիւնը դէպի իրենց գրաւելու ու նրա համակրութիւնը դրաւելու համար։ Տարօրինակ է, որ հայերը կամաւորներ են տալիս, իսկ վրացիները բարձրագոյն շնորհակալութիւն ստանում։

Իմ գործերս կուրսերում շատ լաւ են։ Քիմիան վերջացրի, այժմս սկսել եմ մեխանիկան, որ դատ աւելի դժուար է, քան քիմիան։ Յոյս ունեմ մինչև դեկտեմբերի 10-ը մեխանիկան էլ վերջացնել։

Կուրսերը արդէն (ոչ պաշտօնական) ինստիտուտ են կոչում։ Նամակներ ստացուում են ինստիտուտի անունով։ Պաշտօնապէս Агрономический институт կոչելուն խանգարեց պատերազմը։ Կրիվոլէյինը հաստատել է ինստիտուտի փոխելու պրոէկտը, այնպէս որ մնում է Պետական խորհուրդի հաստատելը։

Բայց ուսանողները չեն սպասում մինչև պաշտօնապէս հաստատուի ու կրում են արդէն А. И. տառերով ուսագիրներ...։

Լեոն

21/11—14
Պետրոգրադ

№ 4

Սիբելի Հայրիկ

Այստեղի աննարգութիւնները վերսկսում են. 3 օր առաջ համալսարանում դարձեալ ուսանողների մէջ կռիւ է սկսուել. Բանը հասել է ծեծի։ Այս անգամ ակադեմիստները ծափահարութեամբ ընդունել են ոստիկանութեանը և մէկ մէկ ցոյց տուել իրենց հակառակորդներին։

Այսօր էլ մեր դպրոցում պատահեց նոյնը, միայն առանց ծեծի։ Ուսանողները մի թռուցիկ ժողով գումարեցին և առաջարկեցին դասադուլ տալ, աչքի առաջ ունենալով, որ հասարակութիւնը ամէն տեսակի մեծ գոհար է բերում (համարեա բոլոր գործի ընդունակներին տանում են պատերազմ сполчение 1-го, и 2-го разряда), տալիս է իր լուման ժողովարանների, ճնշում է նորանոր նալոգների տակ, բայց կրում է բռնապետների լուծը։ Նրանք շեշտում էին, որ դինուորական ցենզուրան փլել է բոլորովին խօսքի ազատութիւնը (նոյնիսկ պատերազմի դաշտում կատարուած գէպքերը սրգելում են արձանագրել). Պետական դումա գոյութիւն չունի... խոստանում են այսօր վաղը գումարել. բայց ...բազմաթիւ նալոգներ նորից սահմանուել են առանց դումայի... (97-րդ յօդուածի հիման վրայ)։ Վերջապէս նրանք իւսում էին Պետական դումայի 6 ձերբակալուած անդամների մասին, որոնց մահուան պատիժ է սպասում։ Այս բոլորից յետոյ նրանք հրաւիրում էին ղպայ մեր լիմար դրութիւնը, կռուել դրա դէմ, և որովհետև ներկայ դէպքում հնարաւոր չէ գործ անել, մեր դժդոհութիւնն ու բողոքը արտայայտել յայտարարելով միօրեայ դասադուլ։

Բուռն ծափահարություններով ընդունուեց այդ ռեզոլիուցիայի ընթերցումը (եթէ հնար եղաւ ռուսերէն գրած կուղարկեմ)։ Բայց դուրս եկաւ այդ ոստիկին մի ուրիշը. «Товарищи не губите вашу родину, не время «ваша», после войны я первый зайду под баррикады, а теперь не время...».

Այս հողի վերայ սկսուեց ընդհարումը. ընդհանուր աղմուկի միջից լսուում էին ««долой, долой» բառերը։ Ներս մտաւ կոմիտեի ներկայացուցիչը, բայց նրան հնարաւորութիւն չտուին որևէ բան ասելու. «Долой посторонних» խօսքերով դուրս արին կուրսերի ներկայացուցչին։ Յանկարծ մէկը ներս մտաւ. «Товарищи по телефону доносят, разойдитесь», Вечная память, «Մարսէլեզ» և այլ յեղափոխական արդելուած երգեր երգելով դուրս եկան լսարանից։ Կարիդորում դեռ երկար լսում էր «ուռա» աղաղակը։ «За правду свободу стоим мы, час возрождения настал» բառերից յետոյ։ Միւս խումբը պատրաստուում էր դասախօսութիւնները լսելու, բայց ազատամիտները խանգարեցին։ «Сыграли революцию, так хватит...» բառերով ցրուեցին ուսանողները, իսկ մի մասը մնաց ու դեռ վիճում էր...։

Իմ կեանքում ոչինչ նորութիւններ չկան։

Ամսի 7-ին քննութիւն կտամ մեխանիկայից։

Լևոն

27/11—14
Պետրոգրադ

№ 5

29/11—14
Պետրոգրադ

Սիրելի Հայրիկ

Նախորդ նամակումս դրել էի գործերի դրութեան մասին։ Բայց հետզհետէ նորանոր կասկածելի լուրեր են տարածուում։ Ներքև գրածս փաստերը թէև չկան լրագիրներում, բայց միանգամայն ճշտութիւններ են, որովհետև լսել եմ շտաբի օֆիցերից, և ոչ մէկից այլ տարբեր պարագաներում մի քանիսից։

Երևի քեզ յայտնի կլինի, որ մեր զօրքերի գերագոյն հրամանատարը՝ Նիկոլայ Նիկոլաևիչը[5], դարձել է մի տեսակ դիկտատոր։ Նա իր կողմից հրամաններ է արձակում, «Повелеваю» բառով սկսելով հրամանը։ Նա առանց որևէ խորհրդակցութեան տուեց լեհերի աւտոնոմիայ, մի բան որ զօրահրամանատարի իրաւունքներից դուրս է։ Գուցէ լսած կլինես, որ ամիս ու կէս առաջ Նիկ. Նիկ-ը այստեղ էր։ Ռուսաստանում գերմանացիք շատ մեծ նուաճումներ են արել. խօսքս այն հանգամանքի մասին է, որ գեներալական շտաբի օֆիցերների մեծ մասը գերմանացիներ են (մեր անյաջողութիւնները պատերազմի դաշտում Նիկ. Նիկ.-ը բացատրում է դրանով)։ Պալատականների մէջ գերմանացիները աւելի շատ են, քան ռուսները։ Վերջապէս այս հրամանատարների մեծ մասը, որ կռուում են գերմանացոց դէմ, դարձեալ գերմանացիներ են։ Օրինակ Ռէնենկամպֆը[6], որի պատճառով ջարդուեցին մեր երկու կորպուսները, Սամսոնով[7] գեներալի հետ։ Մի հայ վիրաւոր պատմում էր ինձ այդ կռուի մասին (ինքը եղել է Սամսոնովի կորպուսում)։ Շտաբը որոշել է նաև յետ նահանջել, բայց Ռէնենկամպֆը հրաման չի ուղարկել ձախ թևին (Սամսոնովի բանակին), իսկ ինքը աջ թևը (Տիլզիտի և Կէօնեգսբերգի կողմից) արագութեամբ յետ է քաշել, թողնելով Սամսոնովի կորպուսները Օստերոդէի մօտ առանց նեցուկի (опора)։ Այս բանի համար Ռէնենկամպֆը այժմս բանտումն է, թէև նստեցնելուց առաջ նրան շքանշան պարգևեցին մեր աչքերը կապելու համար։ Այստեղ մի շատ ուժեղ բանակ է կազմուել, որը ուղում է պատերազմը անմիջապէս դադարեցնել (այս բոլորը սարքում են ռուսահպատակ գերմանացիները) և երևակայիր այդ

բանակի գլխաւորը ինքը կայսրն է[8]: Մետրոպոլիտ . . . . . և կայսրական պալատի մինիստր կոմս Ֆրեդերիկս[9] (գերմանացի) նրա աջ թևն են: Հէնց այս պատճառով է, որ եկել էր Նիկ. Նիկ.իչը ամիս ու կէս առաջ Պետրոգրադ· Կայսրը կանչել էր նրան: Մի քիչ նրան գովելուց յետոյ կայսրը ասում է, որ բաւական է պատերազմել: Նիկ. Նիկ.ը պատասխանում է, որ ինքը չի խառնւում այդ գործին և գիտի միայն, որ իր հրամանի տակ գտնուած 7 միլիոն սուինները դաշինք կնքելուց յետոյ կդառնան դէպի Պետրոգրադ:

Երկու շաբաթ առաջ Նիկ.Նիկ.ը դարձեալ այստեղ էր. այս անգամ եկել էր ինքը: Կայսրին պատմելիս գործերի մասին վերադրում է անյաջողութիւնները զօրքի միջի գերմանացիներին, անուանելով նրանց «շպիոն»: Այս բանի վերայ կոմս Ֆրեդերիկսը դառնում է Նիկ.Նիկ.ին և ասում. «Այդ հաշուով ես էլ մատնիչ եմ». «Ես չեմ էլ կասկածում», պատասխանում է հրամանատարը. Ֆրեդերիկսը վիրաւորական մի խօսք է ասում Նիկ. Նիկ.ին, որին հետևում է մի ամուր ապտակ կոմս Ֆրեդերիկսի երեսին Նիկ. Նիկ.ից: Այս բանը կատարւում է կայսրի ներկայութեամբ (որքան, ուռեմն, ուժեղ է հրամանատարը. սաստնում է զօրքերը բերել Պետրոգրադի վերայ, այսինքն թագաւորի, ապտակում է մինիստրին): (Այս վերջին դէպքի մասին գիտեն նոյնիսկ ռադիր վաճառողները): Անցեալ օրերը մետրոպոլիտ . . . . կայսրի հրամանով դնում է դործող բանակի Նիկ. Նիկ.ի մօտ նոյն հաշտութիւնը կնքելու մտքն ունենալով... «Ваше Высочество, դիմում է, я во сне видел, что мы заключили мир» ...А вы во сне не видели, что я вам закатил оплеуху» պատասխանում է հրամանատարը, և յետ ուղարկում մետրոպոլիտին: Պէտք է ասել որ Նիկ. Նիկ.ը շատ մեծ ժողովրդականութիւն ունի. զօրքը նրան պաշտում է..., բայց ինչքան կարելի է հաւատալ ակոսներում լաց լինող դինուորներին:

Անցեալ օրը մետրոպոլիտ . . . . ., հեռադրում է Նիկ. Նիկ.ին, «Приезжаю»: Վերջինս պատասխանում է. «Приезжайте, верёвка для вас готова»:

Այս բոլորի վերայ աւելացնենք և այն, որ բանուորների և ուսանողների (որոնց «Нов. Вр.» անուանել էր ռուս ժողովրդի բարոմետր) մէջ սկսուել է մի մեծ շարժում... (Շարժման սկիզբը շատ հեռուից է...) և ատող կլինի, որ Ռուսաստանը մեծ կրիզիսի մէջ է. երէկ մի երիտասարդ պրեվատոցենտ (П. Михайлов), մի համալսարանի մադեստր, երկու ուսանող և ես միասին խօսում էինք քաղաքական դէպքերի մասին և իմ խօսքին. թէ ուղափոխութիւնը անխուսափելի է, պրիվատ դոցենտը աւելացրեց (ի միջի այլոց նա պատմական մասում է կարդում). որ անխուսափելի է մի ահռելի բան, յեղափոխութիւն... խառնակութիւն, որի հետևանքը ինչ կլինի Աստուած գիտէ: Ես տեսնում եմ, որ Տօլստոյի գուշակած կատաստրոֆը կամաց-համաց ճշտւում է: Գուցե յետոյ սկսուի իւղաղ կեանքը:

Ով դիտէ Նիկ. Նիկ...ը իր կեանքը կվերջացնի կախաղանի վերայ, թէ կդառնայ մի Նապոլէոն, կամ Գամբետտա[10]: Բայց պահպանողական ուսանողների այս խօսքերը, թէ «После войны мы сами первые зайдем за баррикады», ցոյց են տալիս, որ կատաստրոֆը անխուսափելի է...:

Եւ կատաստրոֆը պէտք է մեծ ազդեցութիւն ունենայ ամբողջ Եւրոպայի վերայ:

Այս պարագաներում Հայոց հարցի գրութիւնը որոշելը շատ դժուար է... Ինչ պատկեր կունենայ ամբողջ աշխարհը..., Եւրոպան, Ռուսաստանը և ինչ կլինի Հայկական հարցը... ամէն մասին խօսելը շատ վտանգաւոր է ու վաղաժամ:

Չե՞ն ճշտւում արդեօք գերմանական սոցիալիստների դուշակութիւնները... Ես իմ նեյտրալիտետը իսկապես կերպով պահպանելու եմ մինչև վերջը...: Այնպէս որ մեծ պետութիւնները այդ կողմից կարող են ապահով լինել...:

Լեոն

Այս նամակս գրելուց յետոյ նոր յիշեցի, որ նախորդ նամակը դեռ չեմ ուղարկել, ուստի յարմար գտայ երկուսը դնել մի ծրարի մէջ և ուղարկել ապահովագ։

№ 6

Սիրելի Մայրիկ[11] և Հայրիկ

Այսօր եկայ Տաշկենդ. Պէտք է յաղորդեմ, որ սարդերին, կիրգիզներին և տաղիկներին հաւաքում են և ուղարկում պատերազմի բեմը «աշխատանքների»։ Հետևանքը այն եղաւ, որ սկսուեց ահագին ղալմաղալ[12]. Հէնց որ յայտնի եղաւ այդ լուրը, սկսուեցին սպանութիւններ, կողոպտներ։ Մի ամբողջ դաւառ աւերակ է դարձել։ Կիրգիզները փչացրել են երկաթուղային գիծը և կոտորել ծառայողներին. իբր բեպրեսիա ուղարկուած է Նամանգանի դաւառը «կարատելնիյ ատբիադ», որը և աւերակ է շինել շրջակայքը։ Դեռ սրբանց չեն հաւաքել. կհաւաքեն 25-ին. Մեր դաւառում սարսափելի պանիկայ է. և ոչ անհիմն։ Ստացայ մի կազեթնիյ վինտովկայ և դարձեալ մի ատրճանակ՝ 200 փամփուշտով։ Շատերը փախչում են աշխատանքներից. դաւառապէտը պաշտօնական դրութեամբ «առաջարկում» է աշխատանքները վերջացնել։ Ընկերոջս երէկ ուղարկեցին հեռաւոր կայաններից մէկը զէնքով և ոռս բանուորներով փրկելու այնտեղ փակուած տեխնիկներին։ Ի դէպս սպանուած է 1 տեխնիկ, միւսը կախ է արուած ծառից։ Կանայք աշխատողներից շատերին... փախցրել են սարերը (7—8 հոգի)։ Մօտենում են ամենավտանգաւոր րոպէները (25—30)։ Այսօր երեկոյ ես դուրս եմ գալու քաղաքից և գնալու եմ կայաններից մէկը՝ «Ջերբակ», որտեղ երևի կմնամ։ Այնտեղի կիրգիզ բանուորները թողել փախել են, և տեխնիկը իր երկու օգնականներով մնացել է մենակ ու սաստիկ վախենում է. Ես իմ մի օգնականի հետ պէտք է տանեմ նրանց մօտ զէնք և դուցէ մնամ՝ այնտեղ՝ նրանց օգնելու վտանգի դէպքում։

Իմ մասին միք յոգայ, մի կերպ եոլա եմ տանում և կտանեմ։ Եթէ նամակս ընկնի ցենզուրի ձեռքը, կպատառոտեն և դեն կածեն, այնպէս, որ չմեղադրէք անփութութեան մէջ։

Գրեցէք ինչ կայ, ինչ չկայ այդ կողմերում, ոչ մի տեղեկութիւն չունեմ։ Լուսիկին[13] խոստացած ադէալը հասկանալի է, որ չեմ կարող ուղարկել ներկայ հանգամանքներում, որովհետև Տաշկենդում բոլոր տեղացիների խանութները փակ են, յաղորդեցէք իրեն որ «չը փքուի»։ Չորս օր ու կէս է վրայից շորերս չեմ հանել և գիշերները քնել եմ 3—3½ ժամ։ 3 օր էլ այսպէս և յետոյ կարելի կլինի մի քիչ հանգստանալ, թէև այն ժամանակ էլ երբեմն գիշերը հերթի կկանգնեմ։

Դեհ առայժմս ց՝գրութիւն։ Սպասում եմ նամակների։

Լևոն

23/7—16

Տաշկենդ

№ 7

15/9—16

Պետրոգրադ

Սիրելի Հայրիկ

Նոր է, որ սենեակ եմ գտել և տեղաւորուել եմ. պարապմունքները արդէն կանոնաւոր սկսուել են։ Ուսանողներ շատ կան բայց մեծամասնութիւնը կանայք են կազմում, որովհետև զինուորագրութիւնը շատերին է դիպել։

Անցնենք օգոստոսի դէպքերին։ Յուլիսի 18-ին ես ստացայ մի պաշտօնական թուղթ, որով ինձ յայտնում էին, որ դրութիւնը խառն է և խորհուրդ էին տալիս աշխատանքներս մի առ ժամանակ ընդհատել։ Ես ուղևորուեցի

Տաշկենդ, ուր ստացայ մանրամասն տեղեկություններ դրության մասին։ 1 օր յետոյ ես ճանապարհ ընկայ Տաշկենդից 130 վերստ յեռու գտնուած «Չերբակ» ստանցիան, հասցրի ընկերոջս դէնք և ռուս բանուոր-պաշտպաններ, 3 օր յետոյ դարձեալ Տաշկենդում էի և պարապ չմնալու համար որոշեցի գնալ միւս ստանցիան, որը Տաշկենդից 800 վերստ հեռաւորության վրայ է։ Տեղը կոչուում է «Ջումգալ» և գտնուում է Սեմիրեչիայում. 12 օր ձիով գնում էի, երբ հասայ տեղ։ Այդ ժամանակ ունէի մօտ 350 ռուբլի յետ ձգած փող և 50 ռուբլիի ընծաներ գնեցի տնեցոց համար։ Ամսի 3-ին ես արդէն Ջումգալում էի, որտեղ ամեն ինչ հանգիստ էր, և աշխատում էի ուրիշ 5 ուսանողի և մի երիտասարդ ինժեների հետ. ամսի 5-ին օրիորդ ինժեների հետ դաշտային աշխատանքից վերադառնում էի, յանկարծ իմ ձին կատաղեց և սկսեց մի սարսափելի վազք դէպի տուն։ Ճանապարհին մեր ոտքի տակ ընկաւ մի կիրգիզ իր ձիով։ Կիրգիզը չվնասուեց, իսկ նրա ձիու ողնաշարը կոտրեց իմ ձին իր կրծքով։ Էլ չգիտեմ թէ ինչ հնարով ես ձիուց չընկայ։ Կիրգիզը լալով եկաւ և սկսեց խնդրել իր վնասը։ Հարցրի թէ ինչ արժէ ձին, և առանց բազար անելու վճարեցի իմ գրպանից ուղած 100 ռուբլին։ Այս 100 ռուբլին էր, որ ըստ երևոյթին փրկեց իմ կեանքը։ 4 օր յետոյ ամսի 9-ին ժամը 12-ին մի տեխնոլոգի հետ դառնում էի տուն նախաճաշելու, ե աչքիս առաջ բացուեց մի տխուր պատկեր։ Տունը այրուում էր։ Չհասկանալով թէ ինչումն է բանը, մենք իջանք ձիաներից և էն է մօտենում էինք տանը, երբ մեզ երկուսիս էլ բռնեցին և ծեծելով տարան մի նկուղ։ Այս նկուղում նստած էինք մինչև միւս օրը, չգիտենալով թէ ինչ է սպասում մեզ։

Հետևեալ օրը մեզ հանեցին հրապարակ և սկսեցին ծեծել։ Առաջ տարան ընկերոջս, որը մի քանի հարուածից ուշաթափուեց։ Հերթը հասաւ ինձ։ Մի քանի հարուածներ հասել էին գլխիս ու մէջքիս, երբ մէջ մտաւ ինձնից փող ստացած կիրգիզը, և իւր ազգու ձայնով ու շարժումներով չթողեց որ ծեծը հասցնեն մինչև վերջը։ Մեզ տարան նոյն նկուղը։ Գիշերը ինձ ծեծից աղաւող կիրգիզը իր երկու որդիների հետ մեզ ազատեց նկուղից և տալով մեզ մեր ձիերը, որ նրան էին բաժին ընկել, և երկու ուղեկից առաջարկեց փախչել, ասելով, որ աւելի լաւ է վտանգել կեանքը, քան թէ սպասել, թե ինչ կանեն մեզ։

Մենք ճանապարհ ընկանք և մի գիշերուայ մէջ անցանք 95 վերստ, ապստամբող դաւառի սահմանը։ Այստեղ մեզ թողին երկու ուղեկիցները և ես ու հիւանդ ջարդուած ընկերս շարունակեցինք կիսակենդան ձիաների վրայ մեր ճանապարհը, մինչև երկաթուղային կայարան։ Այստեղից հեռագրեցինք Տաշկենդ, ստացանք փող (ինչ ասել կուգի, որ ունեցած չունեցածներս բոլորը կողոպտուեց) և վարձելով երեք կիրգիզ, ուղարկեցինք իմանալու մեր ընկերների վիճակը։ Իշխանությունը շատ անզօր էր, որևէ մի բան անելու ապստամբողներին։ 3 օր յետոյ եկան վարձուած մարդիկը և բեռին օրիորդին կիսամեռ տանջուած ամենասոսկալի ասիական տանջանքներով, բռնաբարուած և ուշաթափ։ Ուշքի գալուց և պատմելուց 2 ժամ յետոյ խեղճը մեռաւ և լսելով մեր միւս ընկերների վիճակը (2-ը սպանուած) (2-ը գերի) վճռեցինք ուղեորուել Տաշկենդ, ուր մեզ սպասում էին բոլորը արտասուքները աչքերին։ Խոստացանք մեր ընկերներին ազատողներին (եթէ անվնաս հասցնեն կայարան) 500 ռուբլի։ Մոռացայ ասել, որ օրիորդին թաղեցի կայարանում (այժմս մարդիկ են ուղարկուած մարմինը բերելու)։ Երեկ լուր ստացայ, որ երկու դերի ընկերներս թէև ծեծուած, բայց և այնպէս ազատուել են, 500-ական ռուբլի փրկանք վճարելով։

Տաշկենդում հանգստանալուց յետոյ ամսի 2-ին ճանապարհ ընկայ Պետրոգրադ, ունենալով գրպանումս 80 ռուբլի։ Հասայ, մօտս կար 70 ռ.։ Այդ 70 ռուբլին ուզում էի վճարել ուսման վարձ։ Բայց այնքան պակասներ ունէի և այնպիսի թանկություն է, որ չկարողացայ։ Շատ կխնդրէի, եթէ հնարաւոր է, ուղարկէիր գոնե 35—40 ռ., մնացածը (լրիւ 70 է) ես մի կերպ կգտնեմ (կաշխատեմ) և կվճարեմ։ Եթէ մինչև...

8/11—16
Պետրոգրադ

№ 8

Սիրելի Հայրիկ

Գրում եմ այս նամակը, որպէսզի հանգիստ լինեք, և առհասարակ այժմս շաբաթը մեկ անգամ երկու բացիկ կգրեմ. ժամանակը այդ է պահանջում։ Գործերս առայժմս լաւ են։ Այս տարի այնքան ծանրաբեռնուած եմ պրաքտիկական աշխատանքներով, որ ժամանակ չի լինում նոյնիսկ երբեմն ամենակարևոր բաների համար. Գումայի ժողովուիլը և գլխաւորապէս ճառերը մեծ յուզում են առաջ բերել. չգիտեմ Ձեզ կհասնին այս խօսքերը, որ ասուել են Դումայում, թէ ոչ—ոչ զրել կարելի է, ոչ տպում են։ Ձափազանց խիստ հսկողութիւն է ամենուրեք. բաղմաթիւ ձերբակալութիւններ են տեղի ունենում. ոչ ոք ապահով չէ մի անակնկալից։ Ես ինչքան կարելի է հեռու եմ մնում ամէն տեսակ վտանգաւոր բաներից և այնպէս էլ շարունակելու տրամադրութիւն ունեմ։ Գրեցէք ինչ է կատարուում այդտեղ և տանը։

Լևոն

№ 9

27/2—918

Սիրելի Հայրիկ և Մայրիկ

Անվրդով հասանք Ալեքսանդրապոլ. մի ժամից ճանապարհուելու ենք դէպի Ղարս։ Պատահեցի այստեղ Պահլաւունի եղբայրներին։ Մամայի մօտից անցնելիս մութն էր և չտեսայ Արտեմի և այլոց տան դրութիւնը։ Ալաչա-Սարալում տեսայ Լօրուա բատալիօնի պահակը, որոնք ասացին, թէ ոչինչ այրուած չէ և որ մօտ օրերս ուղարկելու են այնտեղ էլ պահակ։ Լուրերի համաձայն, մեր անցնելուց յետոյ Սադախլօ կայարանը այրուած է (?)։

Լևոն

№ 10

Սիրելի Հայրիկ և Մայրիկ.

Առայժմս ողջ առողջ եմ և զբաղուած գործերով։ Երկու օր առաջ դեացինք և քարուքանդ արինք մի քիւրդի գեղ, որոնք խլել էին մեր դիւղերներից հրացանները։

Դրութիւնը այստեղ շատ անհանգիստ է, տեսնենք թէ ինչով կվերջանայ. Գրեցէք սպասում եմ։

Լևոն

Ղարս 5/3—918 № 1
Հասցեն

№ 11

4/12—1920 թ.

Սիրելի Հայրիկ

Մինչև նամակս ստանալը քեզ արդէն յայտնի կլինի այստեղ կատարուած փոփոխութիւնների մասին. դուցէ ավելի շատ, քան ես կարող եմ այժմս գրել։

Ինչ է սպասում ինձ վաղը, մահ թէ կեանք, դժվար է ասել. բայց նկատի ունենալով, որ ես անցեալում չեմ ունեցել ոչ մի ինձ վարկաբեկող բան, յոյս ունեմ որ ողջ կմնամ։

Գուցէ Վրաստանն էլ մի քանի օրից լինի նոյն վիճակի, ինչ որ այսօր Հայաստանը, բայց և այնպէս ես կաշխատեմ հնար եղած վայրկեանին դալ ձեզ մօտ՝ բաժանելու ձեզ հետ ձեր վիճակը։ Առայժմս ողջ առողջ եմ։

Ջերմ համբոյրներ բոլորին,

Քո Լևոն

Գիշրլիւ (Սարդարաբադի մոտ).

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մեծ տրամաչափի հրանոթային արկ։

2 Կոտորակառումը։

3 Վորոնցով Դաշկով Ի. Ի. (1837—1916), կոմս, ռուս. պետական գործիչ, գեներալ-լեյտենանտ. 1905—15 թթ.՝ Կովկասի փոխարքա։

4 Վորոնցով Դաշկովը համաձայնության գալով Հայկական ազգային բյուրոյի հետ, որն իր վրա էր վերցրել հայ կամավորական դնդերի կազմակերպման գործը (Թուրքիայի դեմ պատերազմելու համար), 1914 թ. սեպտեմբերից ձեռնամուխ եղավ հայկական կամավորական ջոկատների հավաքագրմանը։

5 Նիկոլայ Նիկոլաևիչ (Կրտսեր) (1856—1929), մեծ իշխան, հեծելազորի գեներալ (1901), Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, 1914 թ. հուլիսի 20-ից՝ Գերագույն Գլխավոր հրամանատար, 1915-ից՝ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար։

6 Ռեննենկամպֆ Պ. Կ. (1854—1918), ռուսական հեծելազորի գեներալ (1910), մասնակցել է ռուս-ճապոնական պատերազմին (1904—1905), Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին՝ 1-ին բանակի հրամանատար։

7 Սամսոնով Ա. Վ. (1859—1914), հեծելազորի գեներալ (1910), մասնակցել է ռուս ճապոնական պատերազմին (1904—1905)։ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին՝ 2-րդ բանակի հրամանատար։ Արևելյան ռազմաճակատում չափազանց պարտություն կրելուց հետո ինքնասպան է եղել։

8 Նկատի ունի Նիկոլայ II կայսրին։

9 Ֆրեդերիկս Վ. Բ. (1838—1927), ռուսական պետական գործիչ, կոմս (1913), գեներալ-համարդ, հեծելազորի գեներալ, Պետական խորհրդի անդամ, Նիկոլայ II կայսեր մտերիմ ասոիճանավորներից մեկը, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ սպիտակ վտարանդի։

10 Գամբետտա Լ. Մ. (1832—1882), ֆրանսիացի քաղաքական և պետական գործիչ, իրավաբան, 1881—1882 թթ.՝ վարչապետ և արտաքին գործերի նախարար։

11 Սաթենիկ Մալխասյան, Ստ. Մալխասյանի կինը։

12 Չնայած այն բանին, որ ցարական օրենքներով ոչ ռուս բնակչությունը ազատված էր զինվորական ծառայությունից, 1916 թ. հունիսին կառավարությունը հրաման արձակեց միջին ասիական ժողովուրդների 19—43 տարեկան տղամարդկանց զորակոչի մասին, որն էլ առիթ դարձավ լայնածավալ ապստամբության։

13 Լևոնի քույրը, ֆրանսահայ մեծանուն դաշնակահար Բաֆֆի Պետրոսյանի մայրը։